ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ

0054 ք. Երևան, Դավթաշեն 2-րդ թաղամաս, 62/26, ընդունարան 370-298, բարտուղարություն 374-001, ֆաքս 370-296

№ 4/70 «21» 01 2020 թ.

Ձեր

ԱՁ Հայկ Մարտիրոսյանին (ՀՎՀՀ 27875857)
ք.Երևան, Դավիթաշեն 1թաղ. 46 շենք, բն. 4
էլ. հասցե՝ Pe-h.martirosyan@mail.ru

ԾԱՆՈՒՑՈՒՄ

Պայմանագիրը մասնակի միակողմանի լուծելու մասին

ՀՀ ոստիկանության զորքերի և «Հայկ Մարտիրոսյան» ԱՁ-ի միջև 22.05.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/9/ԱԾ-47» ծածկագրով ավտոպահեստամասերի գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում «Հայկ Մարտիրոսյան» ԱՁ-ն ստանձնած պարտավորությունները կատարել է ոչ պատշաճ՝ մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Համաձայն Պայմանագրի 2.1.7-րդ կետի Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Մատակարարը էականորեն խախտել է Պայմանագիրը, ընդ որում Պայմանագրի նույն կետի «բ» ենթակետի համաձայն Պայմանագիրը համարվում է էականորեն խախտված եթե ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետի 16-րդ ենթակետը և Պայմանագրի 8.9-րդ կետը՝ ՀՀ ոստիկանության զորքերը 2019թ-ի դեկտեմբերի 30-ին միակողմանի լուծում է ՀՀ ոստիկանության զորքերի և «Հայկ Մարտիրոսյան» ԱՁ-ի միջև 22.05.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈԶ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/9/ԱԾ-47» ծածկագրով Պայմանագիրը:

Կատարող՝ Ս. Համբոյան
Հեռ. 010-37-40-15

գործքերի և «Հայկ Մարտիրոսյան» ԱՁ-ի միջև 22.05.2019թ-ին կնքված թիվ «ՀՀ ԿԱ ՈՁ ԳՀԱՊՁԲ-19/6/Բ/9/ԱԾ-47» ծածկագրով Պայմանագիրը:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Պայմանագիրը կհամարվի միակողմանի լուծված՝ սույն ծանուցումը Պատվիրատուի կողմից տեղեկագրում հրապարակվելուն հաջորդ օրվանից:

«Հայկ Մարտիրոսյան» ԱՁ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով ընկերության տվյալները ներկայացվելու է լիազոր պետական մարմին:

Մատակարարի կողմից Պայմանագրի շրջանակում ներկայացված տուժանքի համաձայնագիրը և Պայմանագրին կից ներկայացված վճարման պահանջագիրը, սահմանված կարգով, կներկայացվի «Արդշինբանկ» ՓԲ ընկերություն՝ տուժանքի համաձայնագրով սահմանված գումարը՝ 21047 ՀՀ դրամ, ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչության N 900005000758 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

հրամանատարի պարտականությունների
ժամանակավոր կատարող
փոխգնդապետ **Գ. Դալլաքյան**

Կատարող՝ Ս. Համբոյան
Հեռ. 010-37-40-15